



COVID-19-ի պատվաստանյութի տեղեկատու ուղեցույց իմունոդեֆիցիտ ունեցող անձանց համար

Իմունոդեֆիցիտ ունեցող անձինք հատկապես խոցելի են վարակների, այդ թվում՝ COVID-19-ի նկատմամբ: **Եթե դուք ունեք հետևյալ բժշկական վիճակներից որևէ մեկը, ապա դուք համարվում եք չափավորից ծանր իմունային անբավարարություն ունեցող անձ և կարող եք օգտվել COVID-19 պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափից: Սա ներառում է մարդկանց, ովքեր:**

- » Ստանում են քաղցկեղի ակտիվ բուժում ուռուցքների կամ արյան քաղցկեղի համար
- » Ստացել են օրգանի փոխպատվաստում և դեղորայք են ընդունում իրենց իմունային համակարգը ճնշելու նպատակով
- » Ստացել են ցողունային բջիջների փոխպատվաստում վերջին 2 տարում կամ ընդունում են դեղորայք, որպեսզի ճնշեն իրենց իմունային համակարգը
- » Ունեն չափավորից ծանր առաջնային իմունային անբավարարություն (օրինակ՝ ԴիՋորջի համախտանիշ, Վիսկոտ-Ալդրիչի համախտանիշ)
- » Ունեն խորացված կամ չբուժված ՄԻԱՎ վարակ
- » Ստանում են ակտիվ բուժում բարձր դեղաչափի կորտիկոստերոիդներով կամ այլ դեղամիջոցներով, որոնք կարող են ճնշել իմունային համակարգի արձագանքը:

Այս ցանկը չի ներառում իմունոդեֆիցիտի բոլոր վիճակները, խնդրում ենք զրուցել ձեր բուժաշխատողի հետ՝ որոշելու, թե արդյոք լրացուցիչ դեղաչափերը ձեզ օգուտ կտան: Եթե դուք թույլ իմունիտետ ունեք, ստուգեք ստորև գծապատկերը, որպեսզի հասկանաք, թե քանի դեղաչափ կարող եք իրավասու լինել ստանալ COVID-19-ից պաշտպանված մնալու համար:

Եթե ստացել եք...	Տարիքային խումբ	Առաջնային շարք	Արդյոք ես պե՞տք է ստանամ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻԱՎԱԼԵՆՏ ԴԵՂԱՉԱՓ:	Կարո՞ղ եմ ստանալ ԽԹԱՆԻՉ:
Moderna	6 ամսականից մինչև 4 տարեկան	Երկու դեղաչափերը տրվում են 28 օրվա տարբերությամբ	Այո, դուք պետք է ստանաք լրացուցիչ դեղաչափ ձեր երկրորդ դեղաչափից հետո 28 օր անց:	Այո, 6 ամսականից 4 տարեկան երեխաները պետք է ստանան թարմացված երկվալենտ խթանիչ, որը նույն ապրանքանիշի է, ինչ իրենց ստացած առաջնային շարքը
	5 տարեկան	Երկու դեղաչափերը տրվում են 28 օրվա տարբերությամբ	Այո, դուք պետք է ստանաք լրացուցիչ դեղաչափ ձեր երկրորդ դեղաչափից հետո 28 օր անց:	5 տարեկան և ավելի մեծ անձինք պետք է ստանան Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ խթանիչ դեղաչափը
	6+ տարեկան երեխաներ	Երկու դեղաչափերը տրվում են 28 օրվա տարբերությամբ	Այո, դուք պետք է ստանաք լրացուցիչ դեղաչափ ձեր երկրորդ դեղաչափից հետո 28 օր անց:	Այո, 6 տարեկան և ավելի մեծ տարիքի անձանց խորհուրդ է տրվում Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ մՌՆԹ-ի խթանիչ դեղաչափը վերջին դեղաչափից հետո 2 ամիս անց, որպեսզի պաշտպանված լինեն վիրուսից: 18 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք, ովքեր չեն ստացել նախորդ դեղաչափը, կարող են նաև ստանալ Novavax-ի խթանիչ դեղաչափն իրենց առաջնային շարքն ավարտելուց հետո 6 ամիս անց, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա մՌՆԹ թարմացված խթանիչ...
Pfizer	6 ամսականից մինչև 4 տարեկան երեխաներ	Երեք դեղաչափ. Առաջին երկու դեղաչափերը տրվում են 21 օրվա տարբերությամբ, երրորդ դեղաչափը՝ 8 շաբաթ անց:	Այս պահին հարկավոր չէ որևէ լրացուցիչ առաջնային դեղաչափ:	Ոչ, թարմացված երկվալենտ դեղաչափը չի թույլատրվում 6 ամսականից 4 տարեկան երեխաներին, ովքեր այս պահին արդեն ավարտել են Pfizer-ի առաջնային շարքը:
	5 տարեկան երեխաներ	Երկու դեղաչափերը տրվում են 21 օրվա տարբերությամբ	Այո, դուք պետք է ստանաք լրացուցիչ դեղաչափ ձեր երկրորդ դեղաչափից հետո 28 օր անց:	Այո, 5 տարեկան երեխաները, ովքեր ստացել են Pfizer, կարող են միայն ստանալ Pfizer-ի թարմացված երկվալենտ խթանիչ
	6+ տարեկան երեխաներ	Երկու դեղաչափերը տրվում են 21 օրվա տարբերությամբ	Այո, դուք պետք է ստանաք լրացուցիչ դեղաչափ ձեր երկրորդ դեղաչափից հետո 28 օր անց:	Այո, 6 տարեկան և ավելի մեծ տարիքի անձանց խորհուրդ է տրվում Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ մՌՆԹ-ի խթանիչ դեղաչափը վերջին դեղաչափից հետո 2 ամիս անց, որպեսզի պաշտպանված լինեն վիրուսից: 18 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք, ովքեր չեն ստացել նախորդ դեղաչափը, կարող են նաև ստանալ Novavax-ի խթանիչ դեղաչափն իրենց առաջնային շարքն ավարտելուց հետո 6 ամիս անց, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա մՌՆԹ թարմացված խթանիչ...
Johnson & Johnson	18+ տարեկան	Մեկ դեղաչափ	Այո, դուք պետք է մՌՆԹ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ ստանաք J&J-ի 1-ին դեղաչափն ավարտելուց հետո 28 օր անց:	Այո, Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ մՌՆԹ-ի խթանիչ դեղաչափը խորհուրդ է տրվում վերջին դեղաչափից հետո 2 ամիս անց, որպեսզի պաշտպանված լինեք վիրուսից: 18 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք, ովքեր չեն ստացել նախորդ դեղաչափը, կարող են նաև ստանալ Novavax-ի խթանիչ դեղաչափն իրենց առաջնային շարքն ավարտելուց հետո 6 ամիս անց, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա մՌՆԹ թարմացված խթանիչ...
Novavax	12+ տարեկան	Երկու դեղաչափերը տրվում են 21 օրվա տարբերությամբ	Ոչ, այս պահին որևէ լրացուցիչ առաջնային դեղաչափ հարկավոր չէ:	Այո, 12 տարեկան և ավելի մեծ տարիքի անձանց խորհուրդ է տրվում Pfizer-ի կամ Moderna-ի թարմացված երկվալենտ մՌՆԹ-ի խթանիչ դեղաչափը վերջին դեղաչափից հետո 2 ամիս անց, որպեսզի պաշտպանված լինեն վիրուսից: 18 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք, ովքեր չեն ստացել նախորդ դեղաչափը, կարող են նաև ստանալ Novavax-ի խթանիչ դեղաչափն իրենց առաջնային շարքն ավարտելուց հետո 6 ամիս անց, եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա մՌՆԹ թարմացված խթանիչ:

Հաճախակի տրվող հարցեր

Ո՞րն է տարբերությունը լրացուցիչ պատվաստանյութի դեղաչափի և խթանիչ պատվաստանյութի դեղաչափի միջև:

Լրացուցիչ դեղաչափը նախատեսված է որոշ պացիենտների համար (տես ստորև աղյուսակը), ովքեր ավարտել են առաջնային պատվաստանյութի շարքը, բայց չունենին բավականաչափ ուժեղ իմունային արձագանք:

Խթանիչ դեղաչափը տրվում է հզորացնելու կամ վերականգնելու պաշտպանությունը և/կամ իմունիտետը սկզբնական պատվաստանյութի շարքի օգտակարության ժամկետի ավարտից հետո:

Ո՞ր ուղեկցող բժշկական վիճակներն են ձեզ ավելի բարձր ռիսկի ենթարկում COVID-19-ի ծանր հիվանդացության համար:

Ստորև ցանկում նշված խնդիրներ ունեցող անձինք, անկախ իրենց տարիքից, (միայն անգլերեն) ովքեր ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան COVID-19-ով:

COVID-19 պատվաստանյութերը (սկզբնական դեղաչափերը և խթանիչները) և COVID-19-ի մյուս կանխարգելիչ միջոցառումները կարևոր են, հատկապես, եթե դուք մեծահասակ եք կամ ունեք բազմաթիվ կամ ծանր առողջական խնդիրներ, ներառյալ ցանկում նշվածները: Այս ցանկը չի ներառում բոլոր հնարավոր խնդիրները, որոնք կարող են ձեզ ծանր հիվանդության բարձր ռիսկի տակ դնել COVID-19-ով վարակվելուց: Եթե դուք ունեք խնդիր, որն այստեղ նշված չէ, ապա գրուցեք ձեր առողջապահական մատակարարի հետ, թե ինչպես կարելի է լավագույն կերպով կառավարել ձեր վիճակը և պաշտպանել ձեզ COVID-19-ից:

- » Քաղցկեղ
- » Երիկամի քրոնիկ հիվանդություն
- » Կարդիո քրոնիկ հիվանդություն
- » Թոքերի քրոնիկ հիվանդություն
- » Դեմենցիա կամ այլ նյարդաբանական խանգարումներ
- » Շաքարախտ (1-ին կամ 2-րդ տեսակ)
- » Դաունի համախտանիշ
- » Սրտի խնդիրներ
- » ՄԻԱՎ վարակ
- » Իմունոդեֆիցիտ վիճակ (թուլացած իմունային համակարգ)
- » Հոգեկան առողջության խնդիրներ

- » Գիրություն կամ ճարպակալում
- » Հղիություն
- » Մանզղ բջջային հիվանդություն կամ թալասեմիա
- » Ծխել, այժմ կամ նախկինում
- » Պինդ օրգանի կամ արյան ցողունային բջիջների փոխպատվաստում
- » Ինսուլտ կամ ուղեղա-անոթային հիվանդություն, որն ազդում է դեպի ուղեղ ընթացող արյան հոսքի վրա
- » Հոգեմետ դեղերի օգտագործման չարաշահման խանգարումներ
- » Տուբերկուլյոզ

Ի՞նչ է թարմացված/երկվալենտ խթանիչը:

COVID-19-ի թարմացված/երկվալենտ խթանիչը պատվաստանյութի բանաձև է, որը և՛ խթանում է իմունիտետը կորոնավիրուսային բնօրինակ շտամի դեմ, և՛ նաև պաշտպանում է ավելի նոր շտամներից, որոնք ընթացիկ դեպքերի մեծ մասն են կազմում: Թարմացված խթանիչները նախատեսված են վիրուսից օպտիմալ պաշտպանություն ապահովելու և ժամանակի ընթացքում պատվաստանյութի արդյունավետության նվազման դեմ պայքարի համար:

Արդյոք չափավոր կամ ծանր իմունային անբավարարություն ունեցողներին անհրաժեշտ է բժշկի գրություն/դեղատոմս կամ այլ փաստաթուղթ այս դեղաչափերը ստանալու համար:

Ոչ, անհատները կարող են ինքնուրույն որոշել և ստանալ բոլոր դեղաչափերն այն վայրերում, որտեղ պատվաստանյութերն առաջարկվում են: Սա կօգնի ապահովել, որ այս բնակչության համար պատվաստանյութերից օգտվելու որևէ արգելք չկա: Եթե թույլ իմունիտետ ունեցող անձինք մտահոգություններ ունեն իրենց հատուկ բժշկական վիճակի առումով, նրանք կարող են քննարկել իրենց առողջապահական մատակարարի հետ, թե արդյոք լրացուցիչ դեղաչափ ստանալը համապատասխանում է նրանց:

Եթե ես ստանամ COVID-19-ի պատվաստանյութ, արդյոք դեռ պե՞տք է այլ նախազգուշական միջոցներ ձեռնարկել:

Այո, նույնիսկ եթե դուք պատվաստվեք, ձեզնից կարող է պահանջվել դիմակ կրել որոշ հանրային փակ վայրերում: [Դիմակների և դեմքի ծածկոցների մեր ՀՏՀ էջից](#) տեղեկացեք մանրամասների մասին:(անգլերեն) Նաև խորհուրդ ենք տալիս հաճախակի լվանալ ձեռքերը, մնալ վեց ոտնաչափ հեռավորության վրա և սահմանափակել հավաքույթները:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը լավ են աշխատում, բայց դրանք 100%-ով արդյունավետ չեն: Որոշ մարդիկ կարող են վարակվել COVID-19-ով, նույնիսկ եթե պատվաստվել են: Ավելի շատ փոխանցվող շտամների աճի հետ մեկտեղ կարևոր է, որ բոլոր մարդիկ նախազգուշական միջոցներ ձեռնարկեն, ինչպիսիք են դիմակներ կրելը՝ վիրուսի փոխանցումը նվազեցնելու նպատակով:

Ունեք այլ հարցե՞ր: Այցելե՛ք՝ doh.wa.gov/covidbooster

